# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դդմաշենի միջնակարգ դպրոց

6-րդ դասարան

Ա. Թադևոսյան

« 2022-2023» ուսումնական տարի

## ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը ) Դասարանը բաղկացած է 19 աշակերտ՝ 10 տղա, 9աղջիկ:Դասարանում կա 6 գերազանցիկ,6 հարվածային:: Դասարանում բոլոր աշակերտները ակտիվ են և աշխույժ: Անհատական աշխատանք է կատարվել ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ:Աշակերտները պատրաստակամ են,
նախաձեռնող, ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:Ակտիվ մասնակցել են համադպրոցական բոլոր միջոցառումներին:Բոլորն էլ սովորում են իրենց կարողություններին համապատասխան:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի,
համագործակցություն, փոխօգնություն) :

### 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք
քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն
բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. Դպրոց-ընտանիք կապը

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

## ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարող ներ |
|---|---|---|---|
| 5-9/22թ. | Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում | 5.09.22թ | Ա.Թադևոսյան |
| 12-16/22թ | Կազմակերպչական հարցեր.(հագ ու կապ),ուսում,գիրք,անձնական հիգենա,օրվա ռեժիմ,կարգապահություն,հերթապահություն և այլն: | 12.09.22թ | Ա.Թադևոսյան աշակերտներ |
| 19-23/22թ | «Շնորհավոր տոնդ,Հայաստան»:Զրույց անկախության մասին թեմայով:Կարևորել պետությունների անկախությունը: | 23.09.22թ | աշակերտ դասղեկ |
| 26-30/22թ | Բարեկիրթ վարքի կանոնների ուսուցումը: | 29.09.22 | աշակերտ Ա.Թադևոսյան |
| 3-7/22թ | Ուսումնասիրել աշակերտների վերաբերմունքը ուսման և ուս. առարկաների նկատմամբ: | 03.10.22 | աշակերտ դասղեկ |
| 10-14/22թ | <<Գնահատի՛ր ինքդ քեզ>> կարողանալ կատարել ինքնավերլուծություն,ձևավորել արժեհամակարգ: | 10.10.20 | Ա.Թադևոսյան աշակերտ |
| 17-21/22թ | Զրույց «Երեխաների երաժշտական դաստիարակությունն ընտանիքում» թեմայով: | 17.10.22 | աշակերտ Ա.Թադևոսյան |
| | | | |
| 31-4/22թ | Կարողանալ համապատասխանել ՄԱՐԴ վեհ կոչմանը:Զրույց«Ի՞նչ է պատասխանատվության զգացումը» թեմայով: | 31.11.22 | աշակերտ դասղեկ |
| 7-11/22թ | Հայկական ճարտարապետություն: | 07.11.20 | Ա.Թադևոսյան |
| 14-18/22թ | «Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով»: | 14.11.22 | աշակերտ դասղեկ |
| 21-25/22թ | Այցելել Դիմաշենի Ս.Թադևոս առաքյալի անունը կրող եկեղեցին,ծանոթանալ եկեղեցու կառուցվածքին: | 21.11.22թ | Ա.Թադևոսյան աշակերտ |
| 28-2/22թ | Գեղեցիկ,ընկերական փոխհարաբերություններ:Կարևորել փոխօգնության և համագործակցության դերը մարդկանց կյանքում: | 28.11.22 | Ա.Թադևոսյան |
| 5-9/22թ | Բնական աղետների առաջացման պատճառները և հետևանքները: | 05.12.22թ | Ա.Թադևոսյան աշակերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| 12-16/22թ | Նախապատրաստվել դասարանի ամանորյա ձևավորմանը: | 12.12.22թ | աշակերտ դասղեկ |
| 19-23/22 | Առաջի կիսամյակի ուսումնական արդյունքները:Ամանորյա մաղթանքներ: | 19.12.22թ | աշակերտ դասղեկ |
| 9-13/23թ | Երկրորդ կիսամյակի անելիքների քննարկում: | 09.01.23թ | Ա.Թադևոսյան աշակերտներ |
| 16-20/23թ | Կարևորել Հայոց բանակի դերը և ի ցույց դնել այն մարդկանց գործն ու խիզախումները,ովքեր կարևոր դեր են ունեցել հայրենիքի պաշտպանության գործում: | 16.01.23թ | աշակերտ դասղեկ |
| 23-27/23թ | Զրույց«Ինչպե՞ս հասկանալ մարդկանց,ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունն ու հարգանքը»: | 23.01.23թ | աշակերտ Ա.Թադևոսյան |
| 30-3/23թ | Ինչպե՞ս վարվել աղբի հետ:Աղբի և թափոնների վնասակար ազդեցությունը բնության և մարդու վրա: | 31.01.23թ | աշակերտ դասղեկ |
| 6-10/23թ | Ազգային պետական և եկեղեցական տոներ:Պատրաստվել«Տյառնընդառաջի »տոնին: Հստակեցնել եկեղեցական տոների իմաստն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: | 06.02.23թ | Ա.Թադևոսյան |
| 13-17/23թ | Նախապատրաստվել գիրք նվիրելու տոնին: | 13.02.23թ | աշակերտ դասղեկ |
| 20-24/23թ | Գնահատիր ինքդ քեզ«Բարեկամներ և թշնամիներ» դասարանական ժամ: | 20.02.23թ | աշակերտ դասղեկ |
| 27-3/23թ | Զրույց "Առողջ ապրելակերպի,անվանի սպորտսմենների և նրանց հաջողությունների մասին": | 27.00.23թ | աշակերտ դասղեկ |
| 6-10/23թ | Բարի գործեր և բարություն: Իմ կարողություններն ու ձեռքբերումները: | 06.03.23թ | Ա.Թադևոսյան |
| 13-17/23թ | Զրույց "Մեր գյուղը երեկ և այսօր": Բնության պահպանման խնդիրները գյուղում և մեր անելիքները: | 13.03.23թ | աշակերտ դասղեկ |
| 20-24/23թ | "Քչերը գիտեն,շատերը չգիտեն" հետաքրքիր տեղեկություններ: | 20.03.23թ | աշակերտ դասղեկ |
| | | | |
| 3-7/23թ | Ինչու՞ պետք է հարգալից և քաղաքավարի լինել աղջկա հանդեպ:Բանավեճ Զեկուցում "Ավետման տոնի"մասին: | 03.04.23թ | աշակերտ Ա.Թադևոսյան |
| 10-14/23թ | Ինչպե՞ս պահպանել Երկիր մոլորակը:(Ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք): | 10.04.23թ | աշակերտ դասղեկ |
| 17-21/23թ | Զրույց "Հայաստանը պատմական քառուղիներում ":Ցեղասպանությունը և հայ դատը: | 17.04.23թ | աշակերտ Ա.Թադևոսյան |
| 24-28/23թ | Հայոց Մեծ Եղեռն-ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունները, սերմանել հայրենասիրություն: | 24.04.23թ | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| **1-5/23թ** | Մայիսը հաղթանակների ամիս:Ներկայացնել մայիսյան հերոսամարտերը: | **01.05.23թ** | աշակերտ դասղեկ |
| **8-12/23թ** | Իմ երկրի պատմական և հերոսական էջերը,մարդ, որին կուզեյի նմանվել: | **08.05.23թ** | աշակերտ Ա.Թադևոսյան |
| **15-20/23թ** | Անցկացնել դասարանական ժողով,քննարկել աշակերտների վարքն ու առաջադիմությունը: | **15.05.23թ** | աշակերտ Ա.Թադևոսյան |
| **22-26/23թ** | Ուսումնական տարվա ամփոփում:Հետևել երկրորդ կիսամյակի ամփոփմանը(քննարկում,ձեռքբերումներ և բաց թողումներ): | **22.05.23թ** | Ա.Թադևոսյան |
| | | | |